

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

JOURNAL OF ORIENTAL STUDIES

№ 19

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2021

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի  
արևելագիտության ֆակուլտետի  
գիտական խորհրդի որոշմամբ

**Խմբագրական խորհուրդ՝**

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)

Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր

Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ

Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ

Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր

Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր

Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ

Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ

Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր

Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.

Տեր-Սաթևոսյան Վահրամ պ.գ.դ.

Գրեկյան Երվանդ պ.գ.դ.

Րեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)

Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)

Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ)

Իլյա Յակուբովիչ բ.գ.դ., պրոֆեսոր (Գերմանիա)

Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### Արաբագիտություն

*Հայկ Բոչարյան, Մոհամմեդ Հաջ Իբրահիմ*

«ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ.

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆՄԱՆ, ՏԵՍԱԿԱՆ ՈՒ

ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ»

ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅՈՒՆ (ՄԱՍ Ա).....7-23

*Սոնա Տոնիկյան*

ՂՈՒՐԱՆԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՍՏ ԲԱԴՐ ԱԴ-ԴԻՆ

ԱԼ-ՉԱՐԿԱՇԻԻ ԵՎ ՋԱԼԱԼ ԱԼ-ԴԻՆ ԱԼ-ՍՈՒՅՈՒՏԻԻ

(«ԱՊԱՑՈՒՅՑԸ ՂՈՒՐԱՆԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ»

ԵՎ «ԿԱՏԱՐԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՂՈՒՐԱՆԻ ՄԱՍԻՆ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ» ՏՐԱԿԱՏՆԵՐԻ

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ).....24-34

*Սեդա Տիգրանյան*

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԷՈՒԹՅԱՆ ԵՎ «ՍՈՒՐԲ

ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ» ԴԱՎԱՆԱՆՔԻ ՄԵՐԺՈՒՄԸ ԻԲՆ

ԹԱՅՄԻԱՅԻ (1263-1328) «ՔԻԹԱԲ ԱԼ- ՋԱՎԱԲ»

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ.....35-51

*Մոհամմեդ Հաջ Իբրահիմ*

«ԱՐԴԱՐԱՑՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ»

ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ «ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ» ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ.....52-65

*Խաթիջե Ահմադ Մեհրաբի*

ՀԱՎԵԼՅԱԼ ՀԱՐԱԿՑԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՆԵՐԸ ՂՈՒՐԱՆՈՒՄ.

ԼԵԶՎԱՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....66-76

### Թյուրքագիտություն

*Նաիրա Պողոսյան*

ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ

ՄԱՍՈՒԼՈՒՄ ԽՈՋԱԼՈՒԻ ԴԵՊՔԵՐԻ ՀԻՇԱՏԱԿՄԱՆ

ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ (2021Թ. ԱՌՑԱՆՑ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ).....77-86

*Գոռ Հովհաննիսյան*

ՍԱՆ-ՍՏԵՖԱՆՈՅԻ ՌՈՒՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆԸ.....87-92

*Անուշ Բեխյան*

ՄԻՐԻԱՅԻ ՀՅՈՒՄԻՍՈՒՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՌԱԶՄԱԿԱՆ  
ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՉԱՆԱՅԻՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ.....93-104

*Անահիտ Բարտաշյան*

ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ  
ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՉՄՅՈՒՌՆԻԱՅԻ ՀԱՅ  
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՕՍՄԱՆԻՉՄԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ  
ԱՄՐԱՊԵՆԴՄԱՆ ԳՈՐԾԻՔ.....105-114

*Աստղիկ Պողոսյան*

ԱՀՄԵԴ ԱՂԱՕՂԼՈՒԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ  
1920-1930–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ  
ՍՈՒՍԹԱՑԱՑԱ ՔԵՄԱԼԻ ՀԵՏ.....115-128

**Իրանագիտություն**

*Արեգ Բազրասյան*

ԳՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ  
ԱՐՁԱԿԱԳԻՐՆԵՐԻ ԱԶՔԵՐՈՎ.....129-144

*Ալեն Հայրապետյան*

ԻՐԱՆԻ ՉՐԱԴԱՇՏԱԿԱՆՆԵՐԻ ԼԵԶՎԻ ՈՐՈՇ  
ԲԱՌԱՊԱՇՏԱՐԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՇՈՒՐԶ.....145-156

*Աննա Գևորգյան*

ՄԱՐՏԻՐՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ. ԳԵՆԵՐԱԼ ՍՈՒԼԵՅՄԱՆԻՆ՝  
ՈՐՊԵՍ ՄԱՐՏԻՐՈՍ.....157-164

*Արման Մաֆայրյան*

ԵԱՏՄ ԵՐԿՐՆԵՐԻ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ՝ ՉԼՍ-ՆԵՐՈՒՄ ՈՒ  
ՍՈՒԼՏԻՄԵՐԻԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՑՈՒՄԱՆ ՇՈՒՐԶ.  
ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ.....165-174

**Գրախոսություն**

*Ամայա Պետրոսյան*

Լիլիթ Մովսիսյան. Աղբբեջաներենի դասագիրք, Եվրոպրինտ, Երևան,  
2019, 232 էջ.....175-177

## CONTENT

### Arabic Studies

*Hayk Kocharyan, Mohammed Haj Ibrahim*

“PARADIGM OF TERRORISM IN THE 21ST CENTURY: A CRITICAL INVESTIGATION INTO THE DEFINITIONAL, THEORETICAL AND LEGAL FRAMEWORKS ASSOCIATED WITH TERRORISM” SURVEY (PART ONE).....7-23

*Sona Tonikyan*

QURANIC SCIENCES ACCORDING TO BADR AD-DĪN AL-ZARKASHI AND JALĀL AL-DĪN AL-SUYŪTI (COMPARATIVE ANALYSIS OF TREATISES “THE EVIDENCE IN THE HOLY QUR’ĀN SCIENCES” AND “THE PERFECT GUIDE TO THE SCIENCES OF THE QUR’ĀN”).....24-34

*Seda Tigranyan*

REJECTION OF THE DIVINE ESSENCE OF CHRIST AND THE CONCEPT OF THE HOLY TRINITY ON THE EXAMPLE OF IBN TAYMIYYAH'S (1263-1328) “KITAB AL-JAWAB”.....35-51

*Mohammed Haj Ibrahim*

IMPLEMENTATION OF JUST WAR THEORY FRAMEWORKS ON THE GLOBAL WAR ON TERRORISM.....52-65

*Khadija Ahmad Mehrabi*

SUPPLEMENTAL PREPOSITIONS (HURŪF AL-JARR) IN QURAN: LINGUO-STATISTICAL ANALYSIS.....66-76

### Turkic Studies

*Naira Poghosyan*

REFLECTIONS OF ARMENOPHOBIA IN THE TURKISH MEDIA IN THE CONTEXT OF KHOJALY EVENTS COMMEMORATION (BASED ON THE MONITORING OF THE ONLINE MEDIA IN FEBRUARY 2021).....77-86

*Gor Hovhannisyan*

RUSSIAN MONUMENT IN SAN-STEFANO.....87-92

*Anush Kekhyan*

THE MILITARY PRESENCE OF TURKEY IN THE NORTH OF SYRIA IN THE CONTEXT OF REGIONAL PROCESSES ..... 93-104

*Anahit Kartashyan*

PUBLIC AND COMMUNAL CELEBRATIONS AS A TOOL FOR FOSTERING OTTOMANISM AMONG THE ARMENIAN COMMUNITY OF SMYRNA (IZMIR).....105-114

*Astghik Poghosyan*

AHMET AGHAOGLU'S ACTIVITY IN TURKEY IN THE 1920-30S. COOPERATION WITH ATATURK..... 115-128

### **Iranian Studies**

*Areg Bagratyan*

CENSORSHIP THROUGH THE EYES OF IRANIAN DIASPORA WRITERS .....129-144

*Alen Hayrapetyants*

ON SOME LEXICAL UNITS IN THE LANGUAGE OF ZOROASTRIANS IN IRAN.....145-156

*Anna Gevorgyan*

THE MARTYRDOM IN THE POLITICAL DISCOURSE OF MODERN IRAN. GENERAL SOLEIMANI AS A MARTYR.....157-164

\*\*\*

*Arman Safaryan*

ON THE PROBLEMS OF EDUCATIONAL SYSTEMS OF THE EAEU COUNTRIES AND CHINA IN THE MASS MEDIA AND MULTIMEDIA SPACE: REALITIES AND PERSPECTIVES..... 165-174

### **Review**

*Amalya Petrosyan*

Lilit Movsisyan. Azerbaijan language. Yevroprint. Yerevan, 2019, 232pp..... 175-177

**ԻՐԱՆԻ ՉՐԱԴԱՇՏԱԿԱՆՆԵՐԻ ԼԵՉՎԻ ՈՐՈՇ  
ԲԱՌԱԳԱՇԱՐԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՇՈՒՐՉ**

*Բանալի բառեր՝ դարի, բեհդիներեն, գրադաշտականություն, Յագդ, Քերման*

**Ներածություն.**

Այս հոդվածը նվիրված է մեծամասամբ Յագդ և Քերման քաղաքներում բնակվող գրադաշտականների լեզվի մի շարք բառամիավորների ու բարդությունների քննությանը՝ դրան սերտորեն հարակցող որոշ հնչյունաբանական–բառապաշարային, ինչպես նաև իմաստաբանական հարցերի լուսաբանմամբ:

**Լեզվի համառոտ բնութագիր.**

Բեհդիներենը (նաև Dari, Gabri, Gabraki, Gawruni)<sup>2</sup> պատկանում է իրանական լեզուների մարական<sup>3</sup> ենթախմբին<sup>4</sup>: Այն Յագդ և

<sup>1</sup> ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի մագիստրանտ, էլ. փոստ՝ [alen.hayrapetyants@ysumail.am](mailto:alen.hayrapetyants@ysumail.am)

<sup>2</sup> Սույն անվանումներից լեզվի համար ընտրել ենք «բեհդիներենը» «Behdini» (< մ.ս. vēhdēn՝ վեհ կրոնի հետևորդ)՝ լեզուն դիտարկելով որպես ընդհանրական «գեոլեկտ» (բելուջերենի օրինակով տես Korn 2009; 640) և առանձնացնելով Յագդի(Յ) և Քերմանի(Ք) հիմնական ենթաբարբառները: Գ. Ասատրյանը, պատրվակելով «բեհդին» և քրդարնակ Բա(հ)դինան քաղաքի անվանումների համանունությունը, ընդունելի է համարում լեզվին նվիրված ուսումնասիրություններում որոշակի ընդունելություն գտած «gabri» ձևը, տե՛ս Asatryan G., Wahman F. Notes on the Language and Ethnography of the Zoroastrians of Yazd. Historisk-Filosofiske Meddelelser (HfM) 85. Copenhagen: Reitzel, 2002, էջ 17, Asatryan G. Tārixčē-ye vāže-ye gabr, Nāme-ye pārsi 1/8, 2003, էջ1): Gabr/gabrak(այս բառի մասին տե՛ս նաև Shaki M., Gabr, from Encyclopedia Iranica Vol. X, Fasc. 3, 2012, րէջ 239-240, Paraskiewicz K., In search of gīaour. notes on the new persian gabr ‘a zoroastrian; infidel’, Essays in the History of Languages and Linguistics. Dedicated to Marek Stachowski on the occasion of his 60th birthday. Edited by M. Németh, B. Podolak, M. Urban. Kraków 2017. րէջ 473–481) և ածանցյալ gabri անվանումները քիչ հավանելի են՝ հաշվի առնելով դրանց հանդեպ հանրության բացասական վերաբերմունքը: Gawruni/ gavri՝ թրգմ. «գրադաշտական» ձևերը տարածված են գրադաշտականների մի հատվածի շրջանում միայն (տե՛ս Иванов В., Молчанова Е. Двухязычие Иранских Зороастрийцев, Тридцать лет исламской революции в Иране. Сборник статей, Москва, 2009, էջ 195): Հաշվի առնելով բեհդիներենի մերձավոր լեզվական կապը մարական բարբառների հետ, ինչպես նաև պատմական Խորասանում տարածված դարի լեզվի հետ առնչակցության թեականությունը, (տե՛ս Gholami S., “ZOROASTRIANS OF IRAN vi. Linguistic Documentation,” Encyclopædia Iranica, online edition, 2016, հասանելի է 06.09.2020 <http://www.iranicaonline.org/articles/zoroastrians-in-iran-06>), գերծ կմնանք նաև «դարի», «գրադաշտական դարի» անվանումների կիրառությունից:

Քերման քաղաքներում, ինչպես նաև շրջակա մի շարք գյուղերում բնակվող զրաղաշտականների հաղորդակցման ներհամայնքային լեզուն է<sup>5</sup>: Հայտնի է, որ Յազդ և Քերման քաղաքների զրաղաշտական համայնքները կազմավորվել են կենտրոնական Իրանից, Խորասանից, Միաթանից և մի շարք այլ շրջաններից այստեղ գաղթած զրաղաշտականներից<sup>6</sup>: Այդ իսկ պատճառով լեզվում գտնում ենք թե՛ հս., և թե՛ հվ.արմտ. իրանական լեզվատարրեր: Ակտիվ երկլեզվության, գրական ավանդույթի բացակայության<sup>7</sup>, շարունակական արտագաղթի պայմաններում լեզուն մեծապես կրում է պարսկերենի ազդեցությունը, ինչի արդյունքն է քերականական կաղապարների շփոթը և պարսկական քերականական տարրերի մուտքը լեզու՝ հատկապես դրսևորվող երիտասարդ սերնդի ներկայացուցիչների շրջանում<sup>8</sup>, բազմաթիվ փոխառությունները պարսկերենից, նորակազմությունների սակավությունը, բառակազմության ներուժային եղանակների պասսիվությունը և այլն<sup>9</sup>:

<sup>3</sup> Մանրամասն տե՛ս Lecoq ԷՋԷՋ “Les dialectes du centre de l'Iran.” In: CLI, 1989, քէջ 313–326, Молчанова Е., Расторгуева В. С., Центрального Ирана Диалекты, «Языки мира. Иранские языки. II. Северо- западные иранские языки», Москва, 1999, Windfuhr G. L. (2011), Central dialects, from Encyclopedia Iranica Vol. V, Fasc. 3, քէջ 242-252 հասանելի է 06.09.2020 <http://www.iranicaonline.org/articles/central-dialects>

<sup>4</sup>Այստեղ խուսափել ենք «կենտրոնական» բնորոշումից՝ նկատի առնելով վերջերս Ա. Կոռնի՝ բակտրերենի հիմնառանցքով կենտրոնական իրանական լեզվաճյուղի սահմանման փորձը՝ հիմնված վերականգնման «վերընթաց» մեթոդի վրա, տե՛ս Korn A., Balochi and the Concept of North-Western Iranian, The Baloch and Their Neighbours. Ethnic and Linguistic Contact in Balochistan in Historical and Modern Times. Wiesbaden: Reichert, 2003, քէջ 49-60

<sup>5</sup> Հարկ է հիշատակել Ե. Բրաունի հայտնի խոսքերը. «... Չրաղաշտականները սիրում են իրենց դարին և ինչ-որ առումով չեն ցանկանում այն սովորեցնել օտարականին:» (տե՛ս Lorimer D. L.R. Is There a Gabri Dialect of Modern Persian, Journal of the Royal Asiatic Society of Great Britain & Ireland 2, 1928, էջ 296: Սա իհարկե չի խոսում լեզվի՝ արհեստածին լինելու մասին, ինչի կապակցությամբ որոշակի կասկածներ էր հայտնում Ե. Ռեհատսեկը, տե՛ս Rehatsek, E. ‘Deri Phrases and Dialogues’. Indian Antiquary 2, 1837, էջ 332

<sup>6</sup> Տե՛ս Azargoshasb A. , Marāsem-e mazhabi-ye zartoštīān, Tehran, 1980, էջ 98

<sup>7</sup> Բացառություն են կազմում «Փոքր Ավեստայից» մի քանի հատված, տե՛ս Ivanow W., The Gabri Dialect Spoken by the Zoroastrians of Persian (Grammar). Rivista Degli Studi Orientali 16, 1934, էջ 31:

<sup>8</sup> Տե՛ս Иванов В., Молчанова Е. Двухязычие Иранских Зороастрийцев, Тридцать лет исламской революции в Иране. Сборник статей, Москва, 2009, էջ 199-203:

<sup>9</sup> Մեծաթիվ պատճառներից (մանրամասն տե՛ս՝ Farahmand, M., The Dari Language Project – 2004 Fieldwork Endeavour: Summary of Findings, հասանելի է 06.09.2020 <http://www.heritageinstitute.com/zoroastrianism/pdf/dari.pdf>) կարելի է առանձնացնել նաև զրաղաշտական քրմական վերնախավի ինստիտուտի թուլացման գործոնը:



**Քննվող բառապաշարային միավորներ<sup>10</sup>.**

**āsot`** «մոխիր»<sup>11</sup> < \*asta, հմմտ. ն.ս. āhak<sup>12</sup> կիր<sup>13</sup>, օրմ. yānak` մոխիր, անթեղ, պար. hāğ, ն.ս. xāk` հող (RE 304)<sup>14</sup>: -s/-h < \*-s/\*-θ < \*-k

Կարևորելով մոբեդների դերակատարությունը գրադաշտական ավանդույթների պահպանման հարցում՝ Կ. Մազդապուրը նշում է, որ քրմերի որդիները շատ հաճախ այլ մասնագիտություն են ընտրում, ինչի հետևանքով մոբեդի պաշտոնը և գործառույթների իրականացումը աստիճանաբար անցնում են հասարակ խավի ներկայացուցիչների իրավասության դիրս, տե՛ս Mazdapur K. , Tadvom-e ādāb-e kohan dar rasm ha-ye moa’ser-e zartōštiān dar Irān, Tehran, 2005, էջ 151): Քրմական դասի հիմքերի խարխուլումը կարող է իր անուղղակի բացասական ազդեցությունը թողնել նաև լեզվի վրա: Չրադաշտականների կարծիքով ստանդարտացման և ուսուցման համար առավել նպատակահարմար է հենց Մալաթի խոսվածքը (Հվեր. Mahallati` «քաղաքային» ձևից (տե՛ս Christensen A., Iranische Dialektaufzeichnungen aus dem Nachlass von F.C. Andreas, zusammen mit Kaj Barr und W. Henning bearbeitet und herausgegeben von, Abhandlungen der Gesellschaft der Wissenschaften zu Göttingen philologisch- Historische Klasse, Berlin, 1939, էջ 53, հմմտ. նաև Gabr Mahale անվանումը (տե՛ս Amighi J., K. "KERMAN xiii. Zoroastrians of 19th-Century Yazd and Kerman," Encyclopædia Iranica, online edition, 2014, հասանելի է 06.09.2020 <http://www.iranicaonline.org/articles/kerman-13-zoroastrians>) ` տարածված քրմերի և նրանց ընտանիքների շրջանում:

<sup>10</sup> Բոլոր բառամիավորները քաղված են Ս.Սորուշյանի բառարանից՝ u Sorūšīān J., Farhang-e Behdīnān [Behdīnān (=Zoroastrian’s) Dictionary]. Edited by M. Sotūde. Tehran: Farhang-e Īrānzamīn, 1956

<sup>11</sup> Մոխրի դերը գրադաշտականության մեջ՝ հատկապես կրոնական մաքրագտման արարողակարգում անկարելի է թերագնահատել, մանրամասն տե՛ս Choksy J.K., The Zoroastrian Nāhn Purification Rituals, Journal of Ritual Studies, Vol. 1, No. 2, 1987, էջ 61: Հայտնի է, որ կրակարանի հիմնման համար անհրաժեշտաբար վերցվում է Ātaš Bahrām մոխիրը, չնայած Vd. 5.51-ի պահիավերեն մի մեկնաբանության համաձայն իսկզբանե գործածվել է նաև ընտանի կրակը (ātaxš ī kadagig): Տեղին է հիշատակել նաև «մոխրապաշտ» ածականը՝ հանդիպող հայ մատենագիրների մոտ (c Russell J., Zoroastrianism in Armenia, Harvard, 1987, էջ 484):

<sup>12</sup> Բառի ստուգաբանության համար առաջարկվող են հետևյալ տարբերակները՝ <\*āhaka(տե՛ս Герценберг Л.Г., Из неопубликованного наследия Л.Г. Герценберга, Studies in Persian etymology II (Публикацию подготовили П.А. Кочаров и А.В. Шацков), Acta Linguistica Petropolitana, Труды института лингвистических исследований, Том. X, часть 1, 2014, Санкт- Петербург, էջ 25), <\*āθaka (տե՛ս Hasandust M. An Etymological dictionary of the persian language, 4 Vol., Tehran, 2014, էջ 134):

<sup>13</sup> Կրաշաղախի կիրառման սկիզբը վերագրվում է ուշ պարթևական շրջանին, սակայն Աֆղանստանի Այ- Խանում սելևկյան տեղանքում գտնված մնացորդները կարող են վկայել ավելի վաղ գործածության մասին, տե՛ս Ehlers E., Kawami T. S., “Ahak,” Encyclopædia Iranica, I/6, рէջ 623-624, հասանելի է 06,09,2020 <http://www.iranicaonline.org/articles/ahak-lime>):

<sup>14</sup> Բառի հիմքում հ.ել. \*ak/ \*ok (\*hekw-)( տե՛ս Baghbeidi H., Bāzmānde hā-ye riše-ye hendorupāyi-ye \*ak-/ \*ok- dar zbān-e fārsi, nāme-ye farhangestān 2/2, էջ 71) արմատն է՝ «ուր, հատու» հմմտ. պրսլ. ās` ջրաղացքար, լատ. acēre` սուր, հուն. oxus` «թռու»,

hu.- հրվ.արմտ. իրանական հնչյունական զուգարանության տարբերակման տեսանկյունից<sup>15</sup>, բիդ.-ում բառը հանդես է գալիս բնականոն՝ hu.արմտ. հնչյունական տեսքով(-s <\*-s)՝ հմմտ. mas < \*mas՝ մեծ, rūwōs < \*lopāsa՝ աղվես և այլն<sup>16</sup>: Նախնական իմաստի պահպանումը կարող է պայմանավորված լինել ծիսական, գործառույթային կարևորությամբ:

**bikan/ biken/ bikend՝** «գոմ, խորավեմ, որը փորվում է հոտը այնտեղ պահելու նպատակով», «պատերով շրջապատված վայր՝ նախատեսված գիշերը հոտը այնտեղ թողնելու համար»<sup>17</sup>, հվնբ. < \*aûa-kan-ta<sup>18</sup> ձևից՝ բոց. «փորված, քանդված» հմմտ. ավ. ava-kan-՝ փորել<sup>19</sup> հ.պ. ava-kan-՝ նետել<sup>20</sup>, թր. kända, արդ. oškande՝ «գոմ, ախոռ»<sup>21</sup>, դիգ.ou. oğæn(æ)/ wogæn՝ «պաշարները պահելու վայր»<sup>22</sup>, շուդն. bijīn՝ «հարդ, որ օգտագործվում է որպես թաղիք անասունի համար»<sup>23</sup>:

ուելյ. hogi՝ «սրել» և այլն, տե՛ս Pokorny J., Proto- Indo- European Etymological Dictionary, a revised edition of Julius Pokorny's Indogermanisches Etymologisches Wörterbuch, Scanned and recognized by George Starostin, Moscow, 2007, թջ 61-69:

<sup>15</sup> Տե՛ս Korn A., Balochi and the Concept of North-Western Iranian, offprint from Carina JAHANI, Agnes KORN (eds.) 2003: The Baloch and Their Neighbours. Ethnic and Linguistic Contact in Balochistan in Historical and Modern Times. Wiesbaden: Reichert, էջ 54:

<sup>16</sup> Մանրամասն տե՛ս Asatryan G., Wahman F. Notes on the Language and Ethnography of the Zoroastrians of Yazd, էջ 20:

<sup>17</sup> Տե՛ս Ivanow W., The Gabri Dialect Spoken by the Zoroastrians of Persian. IV. Gabri Vocabulary. Rivista Degli Studi Orientali 18, 1939, էջ 112:

<sup>18</sup> Հ.իր. \*kan- արմատի հարցը վերանայման կարիք ունի: Հիմք ընդունելով իմաստների բազմազանությունը և դրանց միջև թույլ կապը՝ գիտնականների գերակշիռ հաստատված կողմից առանձնացվում է մի քանի արմատ (տե՛ս օրինակ Cheung J., Etymological Dictionary of Iranian Verb, թջ 232-234, Nyberg H., A Manual of Pahlavi, Part II, Glossary, Wiesbaden, 1974, էջ 111, Schmitt R., Wörterbuch der altpersischen Königsinschriften, Wiesbaden, 2014, էջ 199...), մինչդեռ Վ. Արանը, ընդգծելով «փորել» > «լցնել» իմաստարանական կապը, ընդունում է մեկ արմատի գոյությունը (տե՛ս Абаев В. И., «Этимологические заметки. I. иранское kan- — «копать, насыпать», Труды Института Языкознания АН СССР, Москва, Изд. АН СССР, т. VI, 1956, էջ 444-449). Վ.Արանի տեսակետը ընդունում է նաև Դ. Էդելմանը (տե՛ս Эдельман Д. И, Этимологический словарь иранских языков , էջ 199-200):

<sup>19</sup> Տե՛ս Bartholomae Ch., Altiranisches wörterbuch, Strassburg, 1904, էջ 438:

<sup>20</sup> Schmitt R., Wörterbuch der altpersischen Königsinschriften, Wiesbaden, 2014, էջ 199

<sup>21</sup> Տե՛ս Hasandust M., Farhang-e tatbiqui-mowzu'i-e zabānhavaguyeshā-ye irāni-e now. Tehran, 2011, թջ 612-613

<sup>22</sup> Տե՛ս Абаев В. Историко-этимологический словарь осетинского языка. Т. 2. Москва, 1989, էջ 225:

<sup>23</sup> Տե՛ս Стеблин-Каменский И.М., Этимологический словарь ваханского языка, Санкт-Петербург, 1999, էջ 194:

Չնայած հնչյունաբանորեն համաձայնում է < \*ʔi-/ \*abi-<sup>24</sup> նախաձանցնեղով վերականգնմանը, սակայն իմաստաբանության տեսանկյունից խիստ անհամապատասխան է: \*a > -i անցումը կանոնավոր չէ, սակայն հանդիպում է որոշ բառերում՝ xin- (xinādwan/xenudwan)<sup>25</sup>՝ կարդալ < \*xand, minādwan/ menudwan՝ մնալ < \*(d)man, gizum՝ կարիճ<sup>26</sup> < \*gaz, gisnūdwan՝ շրջ(վ)ել < \*gard(?), կցական -ji < \*ča մասնիկը՝ «համ, էլ, նույնպես», հմմտ. ավ. čā, պրթ. -(i)ž/-š և այլն: -nd հնչ.խմբով ձևը<sup>27</sup> կարելի է համարել պարսկական բարբառների ազդեցության արդյունք հմմտ. ն.պ. xandağ, kande և այլն:

**ganza**՝ «սենյակ»<sup>28</sup>, հմմտ. նախնի genzā, քֆր. gänja<sup>29</sup>. <\*ganza-aka ձևից: Հ.իր. \*(a)ka<sup>30</sup> վերջածանցը լեզվում հանդես է գալիս բազմաձև.

<sup>24</sup> Հմմտ. ավ. vī-kan-՝ «կործանել, քանդել» (տե՛ս Bartholomae Ch., Altiranisches wörterbuch, Strassburg, էջ 438), հ.պ. vi-kan-, մ.պ. gugān (տե՛ս Mansuri Y., Tarh-e barresi-ye rishe shenāxti-ye fe’lha-ye pahlavi, Viže nāme-ye farhangestān 2006, քէջ 42-43), պարթ. wigān (Durkin – Meisterernst D., Dictionary of Manichaean Middle Persian and Parthian, Belgium 2004, էջ 352), սող. wk’yn(տե՛ս Gharib Sogdian dictionary, Tehran, 1995), մ.սող. ykyn? և այլն:

<sup>25</sup> Այս տարբերակը արձանագրել է Յուստին, տե՛ս Justi F. Über Die Mundart von Jezd. Zeitschrift Der Deutschen Morgenländischen Gesellschaft 35, 1881, էջ 339:

<sup>26</sup> Տե՛ս Nyberg H., A Manual of Pahlavi, Part II, Glossary, Wiesbaden, 1974, էջ 82:

<sup>27</sup> Բնի-ում կանոնավոր է \*nt> n(n) անցումը, հմմտ. gan(n)em՝ ցրենի, gami՝ փսած և այլն (տե՛ս Wahman, Asatryan Notes on the Language and Ethnography of the Zoroastrians of Yazd, էջ 22):

<sup>28</sup> Չրադաշտական սովորույթի համաձայն(Vd 16.4) կինը դաշտանային (ավ. daxšta-, մ.պ. daštān) ցիկլի ընթացքում պետք է մեկուսանա նշված դեպքի համար հատուկ նախատեսված որմնափակ մի շինությունում(մանրամասն այս մասին տե՛ս Modi J., The Religious Ceremonies and customs of the Parsees, 1937; քէջ 139- 140, մի շարք այլ հետաքրքիր կանոնների մասին տե՛ս Secunda S., Relieving monthly sexual needs: On Pahlavi daštān-māh wizārdan, Dabir 2015, Vol. 1, No. 1, 28-32), որը պետք է տեղակայված լինի կրակից, ջրից, բարեսմանից (զոհաբերության համար նախատեսված խոտ, ավ. Barəsmān, մ.պ. barsom, քնդ. barsem) 15 և ուղղահավասար մարդկանցից 3 քայլ հեռավորության վրա (Vd 16.4) (ավ. panca.dasa.gāim haca āθrat, panca.dasa.gāim haca apaθ, panca.dasa.gāim haca barəsmān frastairiāt, θrigāim haca nərəθbiō aθsauabiō): Յազդի զրադաշտականների մոտ վերոնշյալ շինության գործառույթը իրականացնում է ganza-yi punidun կոչվող սենյակը, տե՛ս Antolak J, The Zoroastrian Houses of Yazd (an article review from Vladimir Fedorovich Minorsky memorial volume, հասանելի է 06,09,2020 [http://www.iranchamber.com/religions/articles/zoroastrian\\_houses\\_yazd.php](http://www.iranchamber.com/religions/articles/zoroastrian_houses_yazd.php) :

<sup>29</sup> Տե՛ս Hassandust M. Farhang-e tatbiqi-mowzu’i-e zabānhavaguyešha-ye irāni-e now, էջ 582:

<sup>30</sup> Հին լեզուներում այս ածանցի մասին մանրամասն տե՛ս Ciancaglini C., Outcomes of the Indo-Iranian suffix \*-ka- in Old Persian and Avesta, Darios studies II Persepolis and its settlements: Territorial system and ideology in the Achaemenid state edited by G.ԷՏ Basello and A.V. Rossi, 2012, Napoli:

գարգացումներով<sup>31</sup>, որոնց թվում են նաև -a/-ä տարբերակները՝ հիմնականում բնորոշ Իրանի մարական բարբառախմբին<sup>32</sup>: Հետաքրքրության առավել մեծ առարկա է բառի կրած իմաստափոխությունը<sup>33</sup>՝ լեզվական իրողությամբ ականազուգարանվող թալ. čāšmā `սենյակ<sup>34</sup>/ աղբյուր < \*čāšman, dašt` բակ/ դաշտ < \*daxšta-: Իմաստափոխության նման օրինակները սովորությանին ամուր կապով հանգուցված, կենցաղի միևնույն առանձնահատկությունները ունեցող հանրության միջավայրային ինքնատիպ ընկալման բազմակողմանի գործընթացների արդյունք են<sup>35</sup>: Քննության առարկա բառի իմաստափոխությունը կարող է, այսպիսով, բավատրվել թե՛ գրադաշտական տների կառուցվածքային առանձնահատկությամբ<sup>36</sup>, և թե՛ հանրության ծանր սոցիալական կացությամբ՝ հիմնականում պայմանավորված մուսուլմանների կողմից շարունակական բռնաճնշումներով: Կարելի է ենթադրել, որ նման պայմաններում գրադաշտականների համար տունը և մասնավորապես սենյակը եղել է պաշտպանության, կյանքի ապահովության կարևորագույն վայրը<sup>37</sup>: Թերևս այս ենթակայական մոտեցմամբ կարելի է բացատրել \*«գանձ» > «սենյակ» իմաստային անցումը: Գայթակղիչ կլինի նաև այս բառի միջոցով տեղորոշել գրադաշտականների բնակության նախկին արեալը Նաինի և Քաֆրոնի շրջակայքում:

<sup>31</sup> Բեհիհնիի –u/-ug-ով կազմված ձևերը կարելի է համարել Քերմանի պարսկական բարբառի ազդեցության արդյունք (մանրամասն տե՛ս՝ Moghaddam A.Sh., Darbāre-ye vend-e /-u/ dar gune-ye zabāni-ye Kerman, pažuheši zabānpažuheši-ya dānšgāhah-e Alzahra, 2014):

<sup>32</sup> Հմմտ. նաշլեթ ašma`լուսին < waxša-māh-ka, ար. šūna < \*fšāna-ka և այլն(տե՛ս Asatryan G. Humbābā yā farhang-e guyešhā-ye markazi-ye Irān, 2012, էջ 35, 39): Չնայած սակավաթիվ վկայությամբ՝ բեհիհնիում կարելի է հանդիպել նման ձևեր՝ swe/ sawa/ swā (/ svaka ?, vara` qum, poxroxa (ն.պ. ցոլցոլակ)՝ խուտուտ:

<sup>33</sup> Հմմտ. նաև զագ. k`ənj, կուրմ. k`inj(ik)՝ «հազուստ, ներքնաշոր» (տե՛ս Asatryan 2009: 324-325) :

<sup>34</sup> Տե՛ս Пирейко Л.А., Тальшско- Русский словарь, Москва, 1976, էջ 248:

<sup>35</sup> Տե՛ս Gabor. G., Semantic change as a Cognitive adaptation process, 2004, րէջ 20-22

<sup>36</sup> Վյս մասին մանրամասն տե՛ս Mazumdar S., Mazumdar S., Religious traditions and domestic architecture: a comparative analysis of zoroastrian and islamic houses in Iran, Journal of Architectural and Planning Research, Vol. 14, No. 3, 1997, րէջ 181-208

<sup>37</sup> Ինչպես նշում է Մ.Բոյսը « Չավէշտալի է, որ գրադաշտականները՝ աչքի ընկնող լույսի վերաբերյալ զարգացած կրոնական գաղափարաբանությամբ, ստիպված էին ապրել այսպիսի աղոտ և պարփակ կառույցներում:» (Տե՛ս Antolak R. The Zoroastrian Houses of Yazd):

**harzow`** «ջուր, որը նախատեսված չէ ոռոգման համար», առաջնաբաղադրիչը հվեր. *haštwan*<sup>38</sup> ` «թողնել, արձակել» բայի ն.հ. *harz* ձևից < հ.իր. \**harz*<sup>39</sup>, *ow`* «ջուր» < հ.իր. \**apa* արմատ կցմամբ՝ բոց. «թափելու ջուր», հմնտ. ն.պ. *harzāb*<sup>40</sup> «օգտագործման համար ոչ պիտանի ջուր»: Ն.պ.-ում նույնաձև կազմություն, ըստ Տ. Ճավճավաձեի, (ն.հ.+ գոյական, տատպուրուշա (तटुष्ठा) տիպ) հանդիպում է միայն –*āb* վերջնաբաղադրիչով բարդություններում՝ *duš-āb*, *miz-āb*, *riz-āb*<sup>41</sup>: Մեր նպատակն է, *harzāb* և *rizāb* բառերի օրինակով քննության առնել դիտարկվող տեսակի բարդության զարգացման հավանական ուղիները: Առաջին հայացքից կարելի է ընդունել, որ բառի հիմքում *harze*<sup>42</sup> բաղադրիչն է < \**harz-* aka, մ.պ. *harzag* (< *harzak*)<sup>43</sup> / *halak*<sup>44</sup> թույլ, արձակ (< մ.իր. \**harzak*<sup>45</sup>) վերջնական կազմակերպման –*e* ձայն. բացակայությունը բացատրելով վաղ դաս.պրսկ. շրջանում տեղի ունեցած հարակից *a-ā* ձայն. միաձուլմամբ՝ *harzāb* < \**harza-* *āb* < \**harzag*(< *k*)- *āb*(<*p*), սակայն մի կողմից ն.պ. *harze-andiš*, մյուս կողմից *rizāb* ձևը < \**rizak* (մ.պ. *kah rizak*, ն.պ. *rizekah*)<sup>46</sup> խախտու են դարձնում նման բացատրությունը<sup>47</sup>: Խնդրին մոտենալով բաղադրիչների քերականական հարաբերության<sup>48</sup>, բայասեռի (*diathesis*) քննության մեթոդաբանությամբ, ինչպես նաև ուշադրություն դարձնելով բառիմաստին՝ կարելի է ենթադրել, որ տվյալ կառույցը հանգում է *բայանուն + ուղղ. հղ. գոյ.* կաղապարով կազմված բարդությանը, քանի որ, ինչպես կարելի է նկատել, երկու դեպքում էլ ընդհանուր հասկացությունը արտահայտում է բայիմաստից բխող հատկանիշով ջուր կամ ջրի տեսակ, ինչը թույլ չի տալիս –*āb*(< \**-āpo*) բաղադրիչը դիտարկել որպես կազմության իմաստային օբյեկտ (ուղիղ խնդիր): Այս դատողությունից է բխում նաև բարդության գոյացման

<sup>38</sup> Հանդիպում է նաև ն.հ.-ից աճանցյալ *harzūdwan* ձևը (տե՛ս Ivanow W., *The Gabri Dialect Spoken by the Zoroastrians of Persian*. IV, էջ 16):

<sup>39</sup> Տե՛ս Cheung J., *Etymological Dictionary of Iranian Verb*, էջ 132:

<sup>40</sup> Հվեր. բիդ.-ի ձևը բնիկ է՝ հաշվի առնելով հակառակ շարադասությամբ *vowharz* (*kartvun*) բառը՝ «դանաթը վերանորոգել», որի գուգահեռը բացակայում է ն.պ.-ում:

<sup>41</sup> Տե՛ս Чавчавадзе Т.А., *Именное словосложение в новоперсидском языке*, Тбилиси, 1981, էջ 144-145: Ավելացնենք նաև *čināb`* «ոռոգման համար ջուր», *gerdāb`* «հորձանուտ» և այլն:

<sup>42</sup> ն.պ.-ում հաճախ գործածվում է կրճատ *harz* ձևով:

<sup>43</sup> Տե՛ս MacKenzie D., *A Concise Pahlavi Dictionary*, Toronto, 1971, էջ 43

<sup>44</sup> Տե՛ս Faravashi B., *Farhang-e fārsi be pahlavi*, Tehran, 2003, էջ 551:

<sup>45</sup> Տե՛ս Չահուկյան Գ., *Հայերեն ստուգաբանական բառարան*, Երևան, 2010, էջ 92:

<sup>46</sup> Տե՛ս Faravashi B., *Farhang-e fārsi be Pahlavi*, էջ 274:

<sup>47</sup> *rize* բառը ն.պ.-ում ունի «բեկոր, կտոր» իմաստը:

<sup>48</sup> Տե՛ս Tabatabaei A., *Tarkib dar zabān-e fārsi, Nāme-ye farhangestān* 3/9, 2013, էջ 189

անհնարինությունը միջինիրանական դարաշրջանում, քանի որ ն.դրբ. –ān (<\*āna) վերջավորությունը արտահայտում է միայն ներգործող իմաստ: Մյուս կողմից մ.ս. -ում բառը պետք է ունենար հվ.արմտ. \*hilāb տեսքը՝ hil- < hard- բաղադրիչով (հմմտ. հ.ս. ava-hard<sup>49</sup>)՝ ի հակադրություն հս.արմտ. –rz հնչյունախմբի<sup>50</sup> հվ.արմտ. լեզուներում պահպանված հիմնականում կրոնական եզրաշերտում՝ հմմտ. ն.ս. āmorz՝ ապաշխարհում<sup>51</sup>: Չնայած harzāb բառը միջին կամ հին լեզուներում վկայված չէ, այնուամենայնիվ նման տեխնիկական եզրի գոյության մասին անուղղակիորեն ակնարկում է մ.ս. Վիդևդադի հետևյալ հատվածը.

« ma pas-iz mazdēsn ān zamīg kārēnd pas ma āb abar hilēnd kū pad ān abar sag ayāb mard be widerēd az andarōn nēmag sāl drahnāy... » Vd. 6.2,A<sup>52</sup>

«Մագդայականը այսուհետ կես տարվա ընթացքում չպետք է քանդի այն հողը, ոչ էլ ջուր թողնի դրա վրա, որտեղով շուն կամ մարդ է անցել...»

Խնդրում պարզություն կարող են մտցնել ավ. tacat.ap<sup>53</sup>, ավ. afš.tacinō(հայց.)<sup>54</sup> մ.ս. ābrēz՝ հոսք, գետակ, առու (< āprēč՝ ն.ս. ābriz )<sup>55</sup>, մ.ս. āb-tazan՝ <’ptcn’><sup>56</sup> բարդությունները: Ավ. tacat.ap՝ «հոսող ջուր» կազմված է ն.դր. + գոյ. կաղապարով, դատելով -at վերջ.-ից՝ անկանոն ներգործ. բայի անշեշտ հիմքից <sup>57</sup>, որտեղ – ap բաղադրիչը կազմության տրամ. ենթական է: Դիտարկվող harzāb բառում, ինչպես նշվեց վերը, ջուրը չի կարող լինել տրամ.ենթակա, ինչից հետևում է, որ կազմության բայը անհրաժեշտաբար պետք է լինի չեզոք սեռի (middle): Հետևաբար, հաշվի առնելով բայի անկանոնությունը, \*ha(ə)r(ə)zat.ap ձևի գոյությունը կարելի է բացառել, քանի որ ավետներենում

<sup>49</sup> St’u Schmitt R., Wörterbuch der altpersischen Königsinschriften, Wiesbaden, 2014, էջ 190:

<sup>50</sup> St’u Tedesco ԷՋ, Dialektologie der westiranischen Turfan-Texte, Le monde oriental 15, 1921, էջ 206:

<sup>51</sup> St’u Lentz W., Die nordiranischen Elemente in der neupersischen Literatursprache bei Firdosi, Zeitschrift für indologie und iranistik/ hrsg. im Auftr. der Deutschen Morgenländischen Gesellschaft, 1922, էջ 262

<sup>52</sup> St’u Moazami M., Wrestling with the Demons of the Pahlavi Widēwdād, transcription, Translation, and Commentary, Leiden, 2014, էջ 164

<sup>53</sup> St’u Kanga K.E., English- Avesta dictionary, Bombay, էջ 203:

<sup>54</sup> St’u նշված աշխատություն, էջ 341:

<sup>55</sup> St’u Faravashi B., Farhang-e fārsi be Pahlavi, էջ 2:

<sup>56</sup> St’u MacKenzie D., A Concise Pahlavi Dictionary, Toronto, 1971, էջ 4:

<sup>57</sup> St’u Skjærvø ԷՋՕ. Old Iranian, The Iranian languages edited by G. Windfuhr (2009), Routledge Language Family Series, էջ 93:

անկանոն բայի ներկա և ապառնի դերք. կազմվում է –mna- < \*V-mHna-<sup>58</sup> վերջ. հավելմամբ, հմմտ. harəšiiamna ձևը (Vr 12.1)<sup>59</sup>: Հավանաբար harzāb ձևը առաջացել է \*har(ə)ziia.ap(a) ձևից՝ բայանվանակերտ (gerundive) –iia վերջավորությամբ, հմմտ. ավ. aibigairiia՝ «խլող, վերցնող», ավ. paitiriciia՝ «դեն նետող»<sup>60</sup>, yasniia՝ «զոհաբերության արժանի»<sup>61</sup>: Այս ենթադրության օգտին կարող է խոսել, թերևս, մ.պ. ābrēz(\*-iia > ø) բառը, որը հակադրվում է տիպաբանորեն *qny.* + *ū.ryr.* կադապարը շարունակող մ.պ. āb-taz-an ձևին, որտեղ \*-ant/\*-at վերջ. փոխարինված է միջ.իր.-ում առավել արտադրողական –ān-ով<sup>62</sup>: Այս ամենով հանդերձ, խնդիրը խորքային ուսումնասիրության կարիք ունի՝ ուղեկցվող շատ ավելի ծավալուն նյութի ներգրավմամբ<sup>63</sup>, ինչը գերազանցապես դուրս է մեր ուսումնասիրության շրջանակներից:

**kāsapušt (𐬑)**՝ «կրիա», վկայված է տեքստերից մեկում՝ «yak ruij yak xarguši ša piši kāsapušt»<sup>64</sup>, *evidenter*՝ հ.իր. \*kasyapa<sup>65</sup>, հմմտ. սկտ. kasyapah<sup>66</sup>, ավ. kasyapa<sup>67</sup>, մ.պ. <kšwkʷ><sup>68</sup>, ն.պ. kašaf, բել. kāsib, աշբ.

<sup>58</sup> St' u Martinez J., de Vaan M., Introduction to Avestan, translated by Ryan Sandell, Boston, 2013, էջ 87:

<sup>59</sup> St' u Cheung J., Etymological Dictionary of Iranian Verb, էջ 132:

<sup>60</sup> St' u Williams Jackson A.V. (1892), An Avesta grammar in comparison with Sanskrit, Part I, Phonology, Inflection, Word-formation, Stuttgart Windfuhr G. L. 2011, էջ 197:

<sup>61</sup> St' u Skjærvø E. QO. Old Iranian, էջ 94:

<sup>62</sup> St' u Cheung J., The Persian Verbal Suffixes -ān and -andeh (-andag), Koninklijke Brill NV, Leiden, 2015, էջ 273:

<sup>63</sup> Ենթադրաբար նման կազմությունների արտադրողականության աճին նպաստել են –āb մի շարք հայտնի կրոնական-պաշտամունքային եզրեր, ծեսերի անվանումներ, ինչպիսիք են օրինակ āb-zohr <ավ. Ape zaθra, քիդ.-ում մետաթեզով ὄw-zur, pādyāb/pādyōw < \*paiti-āp և այլն, մանրամասն տե՛ս Boyce M. "Pādyāb" and "Nērang": Two Pahlavi Terms Further Considered, Bulletin of the School of Oriental and African Studies, University of London, Vol.54, No. 2, 1991, թէջ 281-291: Բացաված չէ նաև նույն բաղադրիչով բազմաթիվ ճաշատեսակների գոյությունը դեռևս հին լեզվադարաշրջանում:

<sup>64</sup> St' u Ivanow W. The Gabri Dialect Spoken by the Zoroastrians of Persian. III. Dpecimens of the Gabri Dialect (Texts). Rivista Degli Studi Orientali 17, 1938, էջ 29:

<sup>65</sup> Դատելով հնչյունական տեսքից (քմային խուլ պայթյականների կուտակում) ինչպես նաև բառակազմության տեսակետից (-pa վերջածանց), բառը կարելի է համարել ենթաշերտային, տե՛ս Lubotsky A., The Indo- Iranian substratum, Originally appeared in: Early Contacts between Uralic and Indo-European: Linguistic and Archaeological Considerations, Helsinki, 2001, էջ 314:

<sup>66</sup> St' u Mayrhofer M. Kurzgefasses etymologisches Wörterbuch des Altindischen, Heidelberg, 1963, էջ 189:

<sup>67</sup> St' u Bartholomae Ch., Altiranisches wörterbuch, Strassburg, 1904, էջ 460:

<sup>68</sup> St' u MacKenzie D., A Concise Pahlavi Dictionary, էջ 50:

kāšna, գուր. kisal և այլն<sup>69</sup>) և pošt բառերի միացություն է՝ առաջացած բաղարկման արդյունքում (< \*kasapapušt)՝ պայմանավորված ն.պ. lākpošt բառի ազդեցությամբ. կազմությունը հանդիպում է ն.պ.-ում kāse-pošt<sup>70</sup>, Աբդուլի քրդ.-ում kōse-pušt, լոթ. խոսվածքներում kāsapošt, Բանդար-Աբբասի բարբառում kāsapošt<sup>71</sup>: Բանդարիի տարբերակը, Ս. Պելեվինի մոտ վկայված kāspa-pošt ձևով <sup>72</sup>, Չ. Կաթկարթը հանգեցնում է հ.իր. \*kasiapa ձևին<sup>73</sup>, սակայն հաշվի առնելով շրջանում հվ.արմտ. բարբառների տարածվածությունը<sup>74</sup>, բառը հազիվ թե կարելի է համարել բնիկ, քանի որ \*s(i) > s անցումը առավել հաճախ նկատելի է հս.արմտ. խմբի բարբառներում: Պատասխանելով չէ, որ նման միացություն (անգլ. *blend word*, գերմ. *Wortverschmelzung*)<sup>75</sup> հանդիպում է Աբդուլի քրդերենում<sup>76</sup>, որը գտնվում է «մարական» և «պարսկական» լեզվախմբերի խաչմերուկում: Այս առումով քիդ.-ում բառը կարելի է համարել բնիկ: Դիտարկվող լեզվում նմանատիպ կազմությունների շարքին կարելի է դասել բաղարկությամբ առաջացած համեմատաբար հին՝ kotilog/ qutelūg՝ «լակոտ, շան ձագ»<sup>77</sup>, ինչպես նաև hormoč <sup>78</sup> բառերը:

<sup>69</sup> St' u Hasandust M. Farhang-e tatbiqi-mowzu'i-e zabānhavaguyeshā-ye irāni-e now. Tehran, 2011, էջ 300:

<sup>70</sup> Կիրառվում է խիստ հազվադեպ. ավելի հաճախակի է lākpošt և kašaf բառերի գործածությունը:

<sup>71</sup> St' u Эдельман Д. И, Этимологический словарь иранских языков, Тома 4,5, Москва, 2011-2015, էջ338:

<sup>72</sup> Նույն հեղինակի մոտ հանդիպում ենք նաև kāsapošt տարբերակը, տե՛ս Pelevin M. (2002), Bandari, Eir, հասանելի է 06,09,2020 <http://www.iranicaonline.org/articles/bandari-the-dialect-spoken-by-the-native-population-of-bandar-abbas> :

<sup>73</sup> St' u Cathcart Ch., Iranian Dialectology and Dialectometry, Berkeley, 2015, էջ 14:

<sup>74</sup> St' u Anonby E., The Keshmi (Qeshmi) Dialect of Hormozgan Province, Iran, Studia Iranica, vol. 44, issue 2, 2015, էջ 17, Skjævnø E.ՋՕ., Lārestāni, Kumzāri, Baškardi, Compendium Linguarum Iranicarum von R. Schmitt, Wiesbaden, 1989, էջ 363, Windfuhr G., FĀRS viii. Dialects, EIr, 1999, հասանելի է 08,09,2020՝ <http://www.iranicaonline.org/articles/fars-viii>

<sup>75</sup> St' u Fradin B., Blending, Submitted to Muller, Peter O., Olsen, Susan, Rainer, Franz Handbook of Word-Formation. Berlin/ New York, 2013, քէջ 3-4:

<sup>76</sup> St' u Christensen A., Iranische Dialektaufzeichnungen aus dem Nachlass von F.C. Andreas, zusammen mit Kaj Barr und W. Henning bearbeitet und herausgegeben von, Abhandlungen der Gesellschaft der Wissenschaften zu Göttingen philologisch- Historische Klasse, Berlin, 1939, քէջ 359-366:

<sup>77</sup> Մանդամասն տե՛ս Tāheri, E., Riše šenāsi-ye čand vāže az gueš hā-ye irāni, Zabān-e fārsi va gueš hā-ye irāni, 2016, էջ 160

<sup>78</sup> Չնայած քիդ.-ում նաշատեսակ է՝ Ս.Սորոշյանի բառարանի համաձայն owmāčū ձևից, սակայն հվ.իր. \*horma և māč(u(g))՝ խուրմա ? ձևերի միացություն է > \*hormāč > hormoč, հմնտ. քել. hurmāg, mač (mačī)( տե՛ս Voskanian V., Boyajian- Sureniants V.,



**moxt**՝ «ցանկություն, կամք», հվնր. < \*kam-ta բայանվան դեռևս վաղ շրջանում դրափոխված և գոյականացած \*makta ձևից<sup>79</sup>: \*kt> xt անցումը իր. լեզուներում օրինաչափ է, հմնտ. ավ. uxta-՝խոսք < h.ել. \*uək<sup>80</sup>, պարթ. sxt՝խոսացված < \*sak, pxt՝ եփած < \*pak<sup>81</sup>. հմնտ. նաև բիդ. vixt-՝ մաղել < \*vak, ն.պ. bixt: Դրափոխության նման օրինակ կարելի է համարել բիդ. lap- (lapnādmun)՝ կոլ տալ < հվնր. \*far ձևից<sup>82</sup>:

**varjin/ barjin/ garjin**<sup>83</sup>, պարզագույն սահմանմամբ՝ «կալսիչ պտտանիվ (rotating barrel)՝ ամրացված երկու լծկանների վրա», հմնտ. էսթ. barju, գազ. շոն, խանս. շոն, միլ. շոն, նել. bur(r)e<sup>84</sup>: Հվնր. բառը

Lexical Gleanings from Bašā kard // Iran & Caucasus, vol. 2, 1998, էջ 6), Քերմանում տարածված moču, թայ. māčā, māčā do (Aboszoda F., English-Talyshi dictionary. A-Z, Lincom-Europa, 2012, էջ 250) խուրմայի ծառ, հվնր. < \*maik՝ներքաշել, ծծել» (տե՛ս Эдельман Д. И., Этимологический словарь иранских языков, Тома 4,5, Москва, 2011-2015, էջ 169-172), հմնտ. մ.պ. mizag (< mičag)՝ «համ» (տե՛ս MacKenzie D., A Concise Pahlavi Dictionary, էջ 56), բել. mičag (տե՛ս Geiger W., Etymologie des Balūči, München, 1890, էջ 235), կ.պ. čümüstān՝ «վաթով կերակրվել» ? (տե՛ս Грюнберг А., Язык североазербайджанских татов, Ленинград, 1963, էջ 54) և այլն: Հնոսարքիի ձև է նաև բիդ. mizow՝ խուրմայի տեսակ (տե՛ս Sorūšān J., Farhang-e Behdīnān [Beddīnān (=Zoroastrian's) Dictionary]. Edited by M. Sotūde. Tehran: Farhang-e Īrānzamīn, 1956, էջ 159), հվնր. mizo (տե՛ս Salāmi A., Xormā dar farhang-e Kermān, Guēš šenāsi, 2006, 2/1, էջ 52) կամ ն.պ. maviz՝ «սև չամիչ» ձևից: Բիդ. -ի բնիկ ձևը հվնր. կունենար \*mu(ā)čow տեսքը, հմնտ. mučustan՝ «ծծել», որի շրջված կառույցն է վերոնշյալ owmāčow բառը:

79 -ta վերջավորությամբ գոյականացած դերբայների օրինակ են մ.պ. dryst՝ առողջություն, kyrd՝ գործողություն, պարթ. myxt՝ խառնուրդ և այլն:

<sup>80</sup> Տե՛ս Расторгуева В., Сравнительно- историческая грамматика западноиранских языков, фонология, Москва, 1990, էջ 77:

<sup>81</sup> Տե՛ս Расторгуева В., Сравнительно- историческая грамматика западноиранских языков, фонология, էջ 220-221:

<sup>82</sup> Տե՛ս Cheung J., Etymological Dictionary of Iranian Verb, էջ 85:

<sup>83</sup> \*v- > g- գարգացումը բնորոշ է Գարմսիի խոսվածքների (Borjian 2017), բելուջերենին (Korn 2003; 55), ինչպես նաև Ֆառոսի քաղաքի (Սպահանի շրջան) ֆարսի բարբառին (Borjian 2013): Այսպիսով նշված բառաձևը՝ Քերմանում արձանագրված միայն garjin տեսքով (Молчанова, Дерин 2014; 47), կարելի է դիտել բելուջական լեզվախմբի ազդեցության արդյունք:

<sup>84</sup> Լեզվին նվիրված ուսումնասիրություններում սարքի մանրամասն նկարագիրը առաջին անգամ գտնում ենք Հոուտոմ-Շինդլերի մոտ (տե՛ս Houtum- Schindler A., Die Parsen in Persien, Ihre Sprache und einige ihrer Gebräuche, Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft unter der verantwortlichen Redaction des Prof. Dr. E. Windisch, Leipzig, 1882, էջ 71): Գյուղատնտեսական սարքավորմանը և բուն եզրի ստուգաբանությանը անդրադարձել են Ս.Դյորինը և Ե. Մոլչանովան համատեղ հոդվածում: Վերջիններիս կարծիքով բառի հիմքում հ.իբ. \*ūrz-, h.ել. \*uerg-՝ «աշխատել» արմատն է, հմնտ. մ.պ. varzāg՝ «լծկան եզ» (տե՛ս MacKenzie D., A Concise Pahlavi Dictionary, էջ 88), ն.պ. varze, varz-gāv, varzou և այլն (տե՛ս Молчанова Е., Дерин С., Словосочетание или словосложение? (к названию молотилки у зороастрийцев Ирана), Вопросы филологии. 2014. N 1(46), ст. 47): Փորձ է արվում

ծագում է *\*varna-čia-(a)mna`* բոց. «պտտվող և հնձող» ձևից: Այսպիսով, կարող է բացատրվել նեյ. bur(r)e տարբերակը < *\*varn-aka*<sup>85</sup> բոց. «պտտվող», ինչպես նաև j < č անցումը<sup>86</sup>: Հարցական է մնում բառի երկրորդ բաղադրիչի կապը շոն/ճոն եզրերի հետ: Գ. Ասատրյանի կարծիքով վերոնշյալ ձևերը կարող են հանդիսանալ «հավանգ» բառի բրբ. տարբերակներ, հմմտ. ն.պ. javan (jūn) < *\*yawa-g(a)na*<sup>87</sup>, սակայն հաշվի առնելով էսթ. barju ձևը, վերջնականի *-i-* հնչյունը բիդ.-ում կարելի է համարել երկրորդական զարգացում, հմմտ. օրինակ բիդ. čiri/čuri «ճուտ»՝ արդ. čuri, բաշ. čüräk, բել. čūri, սելդ. čuri<sup>88</sup>:

## ON SOME LEXICAL UNITS IN THE LANGUAGE OF ZOROASTRIANS IN IRAN

*Alen Hayrapetyants*  
(Summary)

The paper is dedicated to the study of some lexical units in the language of the Zoroastrians residing in Yazd and Kerman cities with the discussion of some closely related lexicological, phonological and semantic issues.

նաև *\*-rz-* > *-rz-* անցումը բիդ.-ում (Յ) բացատրել –brij-< *\*braiz`* «տապակել» բայով (նույնը): Առաջարկված ստուգաբանությունը թերի է՝ հաշվի առնելով հետևյալ կետերը՝ 1. չի պարզաբանվում հեղինակների կողմից ևս արձանագրված շոն/ճոն եզրը (էջ 46), ինչպես նաև մի շարք բարբառներում տարածված bur(r)e ձևը: 2. անտեսվում է –in վերջավորությունը: 3. կարևորելով gōv o garjin արտահայտությունը, ըստ էության անտեսվում է նաև բուն կալիչ սարքը իր հիմնական գործառնությամբ, ինչի արդյունքում առաջարկվող ստուգաբանության սուբյեկտ է ընդունվում լծկանը: 4. թույլ է տրված լեզվաբանական սխալ՝ հ.իբ. *\*bra(i)z/ bra(i)j`* հմմտ. մ.մ.պ. bryz, խորեզմ. bryz, ն.պ. bīrištan (Cheung J., Etymological Dictionary of Iranian Verb, էջ 23) արմատում տեսնելով *-rz-* հնչյունը, որը բիդ.-ում հիմնականում անփոփոխ է մնում<sup>84</sup>, հմմտ. borz՝ բարձր < *\*brz, varzū`* լծկան < *\*varz-aka, čerz-* (տե՛ս Bailey H. W., Yazdi, Bulletin of the School of Oriental Studies, University of London, Vol. 8, No. 2/3, Indian and Iranian Studies: Presented to George Abraham Grierson on His Eighty-Fifth Birthday, 7th January, 1936 (1936), էջ 339, Ivanow W., The Gabri Dialect Spoken by the Zoroastrians of Persian. IV. Gabri Vocabulary. Rivista Degli Studi Orientali 18, 1939, էջ 115)՝ բողոքել < *\*garz/ \*gard*, հմմտ. ալ. Gərəzā-, սողդ. (ə)žgēr կանչել (տե՛ս Gharib, Sogdian dictionary, Tehran, 1995, 2309) և այլն, harz-՝ արձակել < *\*harz* և այլն:

<sup>85</sup> \*rn > rr անցումը արևմտաիրանական լեզուներում օրինակաբար է՝

<sup>86</sup> Բնորոշ է ինչպես բեհիլիներենին, այնպես էլ մարական բարբառներին:

<sup>87</sup> Տե՛ս Asatryan G, Iranian Notes III, Iran & the Caucasus, Vol. 13, No. 2, 2009, էջ 323

<sup>88</sup> Hasandust M., Farhang-e tatbiqi-mowzu'i-e zabānhavaguyēša-ye irāni-e now, էջ 219